


**1.2.7. Առևտուր և այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը)

	2005թ. հունվար-դեկտեմբեր		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ծավալը, մլն. դրամ	2004թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2004թ.	2005թ.
Առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, ընդամենը	1392407.2	112.1	100.0	100.0
այդ թվում՝				
Առևտրի շրջանառություն ¹ , ընդամենը	1076905.3	110.6	78.3	77.3
դրանից՝				
մանրածախ առևտրի շրջանառություն	886198.7	109.3	65.2	63.6
Ծառայություններ ¹	315501.9	117.1	21.7	22.7

Սպառողական շուկայում առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի տեսակարար կշիռներն ըստ եռամսյակների
(ընդհանուրի նկատմամբ, %)




2005թ. հունվար-դեկտեմբերին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի 12.1% աճ՝ 2004թ. հունվար-դեկտեմբերի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով:

Մանրածախ առևտուր

2005թ. հունվար-դեկտեմբերին մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 886198.7 մլն. դրամ, որը 2004թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 9.3%-ով: 2005թ. դեկտեմբերին նոյեմբերի համեմատությամբ մանրածախ առևտրի շրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 178.1%:

¹ Սկսած 2005թ-ից ցուցանիշները ներկայացված են ըստ «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» :

ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ֆիզիկական ծավալի ինդեքսները 2005թ. հունվար-դեկտեմբերին 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (համադրելի գներով, %)



Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2005թ. հունվար-դեկտեմբերին

	2005թ. հունվար-դեկտեմբեր		Ընդհանուրի նկատմամբ, %
	Ծավալը, մլն. դրամ	2004թ հունվար-դեկտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, %	
Մանրածախ առևտրի շրջանառություն, ընդամենը	886198.7	109.3	100
այդ թվում՝			
խանութների	420885.8	123.9	47.5
սպառողական ապրանքների շուկաների	315549.0	102.2	35.6
գյուղատնտեսական արտադրանքի շուկաների	25641.8	104.1	2.9
կրպակների	51673.5	95.4	5.8
առևտրի այլ օբյեկտների	72448.6	78.9	8.2


2005թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալի գերակշռող մասը՝ 83.1%-ը (736434.8 մլն.դրամ), ձևավորվել է խանութների և սպառողական ապրանքների շուկաների միջոցով: Այս միտումը բնորոշ է հանրապետության գրեթե բոլոր մարզերին:

Խանութների և սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող առևտրի տեսակարար կշիռը մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալում ըստ ՀՀ մարզերի, 2005թ. հունվար-դեկտեմբերին

	Ընդհանուր	այդ թվում										
		ք.երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
խանութների և սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության ծավալը, մլն. դրամ	736434.8	627116.2	11666.7	13174.7	12600.1	9221.6	18090.4	16243.7	10988.9	5511.2	4613.6	7207.7
այդ թվում ընդհանուրի նկատմամբ, %	83.1	85.6	92.4	88.6	70.1	84.6	68.6	57.5	65.8	58.5	87.1	62.4

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալն ըստ ձևավորման աղբյուրների,
 ԳՂ մարզերով, 2005թ հունվար-դեկտեմբերին

(ընդհանուրի նկատմամբ, %)



Մանրածախ առևտրի շրջանառության ծավալի դինամիկան
 ըստ ձևավորման աղբյուրների, 2005թ. հունվար-դեկտեմբերին

	Ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում ընդհանուրի նկատմամբ, %				
		խանութներ	սպառողական ապրանքների շուկաներ	գյուղատնտե- սական արտադրանքի շուկաներ	կրպակներ	առևտրի այլ օբյեկտներ
Հունվար	50055.2	50.8	27.6	3.1	10.5	8.0
Հունվար-փետրվար	100356.4	52.1	27.4	3.3	10.0	7.2
Հունվար-մարտ	158433.3	51.6	28.3	3.2	9.7	7.2
Հունվար-ապրիլ	220297.3	52.1	28.8	3.1	9.3	6.7
Հունվար-մայիս	285417.0	51.5	29.0	3.1	8.8	7.6
Հունվար-հունիս	353432.8	50.5	29.1	3.1	8.4	8.9
Հունվար-հուլիս	426115.1	50.6	29.4	3.1	7.9	9.0
Հունվար-օգոստոս	502850.7	50.4	30.1	3.0	7.4	9.1
Հունվար-սեպտեմբեր	577260.3	50.0	30.9	3.0	7.1	9.0
Հունվար-հոկտեմբեր	660659.5	49.9	31.3	3.0	6.7	9.1
Հունվար-նոյեմբեր	740320.3	50.0	31.5	3.1	6.5	8.9
Հունվար-դեկտեմբեր	886198.7	47.5	35.6	2.9	5.8	8.2


Մանրածախ առևտրի օբյեկտների քանակը և առևտրի շրջանառության ծավալներն ըստ ՀՀ մարզերի, 2005թ. հունվար-դեկտեմբերին

	Ընդամենը		այդ թվում									
	գործող օբյեկտների քանակը, միավոր	առևտրի շրջանառության ծավալը, մլն. դրամ	խանութներ		սպառողական ապրանքների շուկաներ		գյուղատնտեսական շուկաներ		կրպակներ		առևտրի այլ օբյեկտներ	
			քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ
ք. Երևան	7805	732279.1	4458	334766.1	23	292350.1	11	14467.5	2825	30472.0	488	60223.4
Արագածոտն	219	12629.0	93	11341.9	3	324.8	4	167.1	101	453.4	18	341.8
Արարատ	680	14874.6	409	11438.7	4	1736.0	3	157.4	217	1444.7	47	97.8
Արմավիր	418	17981.9	78	8215.9	3	4384.2	2	3136.7	323	1365.9	12	879.2
Գեղարքունիք	402	10896.7	185	6862.2	8	2359.4	3	459.7	193	664.1	13	551.3
Լոռի	1128	26352.0	334	12083.0	4	6007.4	4	2219.2	766	5342.2	20	700.2
Կոտայք	1263	28225.9	326	13726.0	7	2517.7	4	217.0	880	5040.3	46	6724.9
Շիրակ	780	16695.1	378	8988.7	9	2000.2	2	3012.3	364	1835.8	27	858.1
Սյունիք	425	9424.1	133	4610.4	2	900.8	3	497.2	263	2105.3	24	1310.4
Վայոց ձոր	112	5295.0	46	4360.5	1	253.1	1	33.2	59	408.3	5	239.9
Տավուշ	854	11545.3	365	4492.4	2	2715.3	2	1274.5	443	2541.5	42	521.6
Ընդամենը	14086	886198.7	6805	420885.8	66	315549.0	39	25641.8	6434	51673.5	742	72448.6

ՀՀ մարզերին բնորոշ են առևտրի շրջանառության տարբեր մակարդակներ: Երևան քաղաքի և ՀՀ նյուս մարզերի առևտրի շրջանառության մակարդակների տարբերությունները հիմնականում պայմանավորված են առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, առևտրի շրջանառության կառուցվածքով, նյութատեխնիկական բազայի հագեցվածությամբ, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

Առևտրի շրջանառության ծավալի կառուցվածքն ըստ մարզերի, 2005թ. հունվար-դեկտեմբերին

(ընդհանուրի նկատմամբ, %)




ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ծավալի 82.6%-ը (732279.1 մլն.դրամ) ապահովել են ք.Երևանի մանրածախ առևտրի օբյեկտները, որը բացատրվում է վերը նշված գործոններով և այն հանգամանքով, որ հանրապետության մի շարք մարզերի (հիմնականում ք.Երևանին մոտ գտնվող մարզերի) բնակչությունն ապրանքների ձեռքբերման պահանջարկի մի մասը բավարարում է նաև ք.Երևանի առևտրի օբյեկտներում:

ՀՀ մանրածախ առևտրում պահպանվել է խանութների միջոցով իրականացվող առևտրի գերակայության միտումը: 2005թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ծավալի 47.5%-ը (420885.8 մլն.դրամ) ձևավորվել է խանութների միջոցով: Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, հանրապետությունում խանութների 50.3%-ը մասնագիտացված է պարենային ապրանքների, 40.8%-ը՝ ոչ պարենային և 8.9 %-ը՝ խառը ապրանքների վաճառքով:

**Խանութների քանակի բաշխվածությունը (պարենային, ոչ պարենային, խառը)
2005թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ մարզերով**

(ընդհանուրի նկատմամբ, %)




Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի շրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2005թ. հունվար-դեկտեմբերին

	Խանութների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Առևտրի շրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Առևտրի շրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	6805	27310	420885.8	100.0
այդ թվում՝				
մինչև 5 մարդ (գերփոքր)	5808	11402	129882.9	30.9
6-15 մարդ (փոքր)	783	6610	88521.7	21.0
16-30 մարդ (միջին)	142	3009	46680.6	11.1
31 և ավելի մարդ (խոշոր)	72	6289	155800.6	37.0

Վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված խանութների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր խանութները՝ 85.3%: Հարկ է նշել, որ դրանց առևտրի շրջանառության ծավալը կազմել է 30.9%, այն դեպքում երբ խանութների ընդհանուր քանակում 1.1%-ը կազմող խոշոր խանութների միջոցով իրականացված առևտրի շրջանառության ծավալը կազմել է՝ 37.0%:

Խանութների միջոցով իրականացվող առևտրի շրջանառության ծավալի կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2005թ. հունվար-դեկտեմբերին

(%)



Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի շրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2005թ. հունվար-դեկտեմբերին

	Առևտրի շրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	334766.1	75407.5	22.5	64464.8	19.3	40218.5	12.0	154675.3	46.2
Արագածոտն	11341.9	5721.0	50.4	5620.9	49.6	-	-	-	-
Արարատ	11438.7	7872.3	68.8	3351.5	29.3	179.7	1.6	35.2	0.3
Արմավիր	8215.9	6125.6	74.6	1502.2	18.3	588.1	7.1	-	-
Գեղարքունիք	6862.2	4715.5	68.7	1742.2	25.4	148.4	2.2	256.1	3.7
Լոռի	12083.0	8226.0	68.1	2047.0	16.9	1810.0	15.0	-	-
Կոտայք	13726.0	8185.2	59.6	2956.8	21.5	2584.0	18.9	-	-
Շիրակ	8988.7	5413.9	60.2	2593.8	28.9	542.0	6.0	439.0	4.9
Սյունիք	4610.4	3307.0	71.7	559.7	12.1	609.9	13.2	133.8	3.0
Վայոց ձոր	4360.5	1364.6	31.3	2734.7	62.7	-	-	261.2	6.0
Տավուշ	4492.4	3544.3	78.9	948.1	21.1	-	-	-	-
Ընդամենը	420885.8	129882.9	30.9	88521.7	21.0	46680.6	11.1	155800.6	37.0


ՀՀ մանրածախ առևտրի շրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները, որոնցից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2005թ. հունվար-դեկտեմբերին առևտրի շրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 315549.0 մլն. դրամ, որը 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 102.2%:

Սպառողական ապրանքների շուկաների քանակը և առևտրի շրջանառության ծավալն ըստ ՀՀ մարզերի, 2005թ.հունվար-դեկտեմբերին

Մարզեր	Քանակը, միավոր	Ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
			պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	23	292350.1	16.0	84.0
Արագածոտն	3	324.8	-	100.0
Արարատ	4	1736.0	-	100.0
Արմավիր	3	4384.2	26.9	73.1
Գեղարքունիք	8	2359.4	24.7	75.3
Լոռի	4	6007.4	48.9	51.1
Կոտայք	7	2517.7	20.5	79.5
Շիրակ	9	2000.2	9.3	90.7
Սյունիք	2	900.8	-	100.0
Վայոց ձոր	1	253.1	56.1	43.9
Տավուշ	2	2715.3	26.6	73.4
Ընդամենը	66	315549.0	16.9	83.1

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Մասնավորապես, 66 սպառողական ապրանքների շուկաներից 43-ը՝ ոչ պարենային ապրանքների վաճառքով մասնագիտացված շուկաներն են: Ընդ որում, ք. Երևանի 23 շուկաներից՝ 14-ը, Շիրակի մարզում՝ 9 շուկաներից 8-ը, Գեղարքունիքի մարզում 8-ից՝ 6-ը, Լոռու մարզում 4-ից՝ 3-ը, Կոտայքի մարզում՝ 7-ից 4-ը, Արագածոտնի, Արարատի և Սյունիքի մարզերում գործող սպառողական ապրանքների շուկաները մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Դրանով է պայմանավորված հանրապետության սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության ծավալում ոչ պարենային ապրանքների մեծ տեսակարար կշիռը, որը կազմել է 83.1%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի (ամփոփ)
(ընդհանուրի նկատմամբ, %)




Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող առևտրի շրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2005թ. հունվար-դեկտեմբերին

	Շուկաների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Առևտրի շրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Առևտրի շրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	66	873	315549.0	100.0
այդ թվում՝				
մինչև 5 մարդ (գերփոքր)	34	95	29875.4	9.5
6-15 մարդ (փոքր)	22	204	53880.5	17.1
16-30 մարդ (միջին)	4	82	7527.4	2.4
31 և ավելի մարդ (խոշոր)	6	492	224265.7	71.0

Սպառողական ապրանքների շուկաներում վարձակալական հիմունքներով առևտուր իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակն ունի հետևյալ բաշխվածությունը. գերփոքր՝ 1864, փոքր՝ 3106, միջին՝ 231 և խոշոր՝ 6560 մարդ:

Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2005թ. հունվար-դեկտեմբերին

(%)



Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող առևտրի շրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ԳՀ մարզերով, 2005թ. հունվար-դեկտեմբերին


	Առևտրի շրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	292350.1	23132.5	7.9	44951.9	15.4	-	-	224265.7	76.7
Արագածոտն	324.8	324.8	100.0	-	-	-	-	-	-
Արարատ	1736.0	1335.2	76.9	400.8	23.1	-	-	-	-
Արմավիր	4384.2	-	-	1443.6	32.9	2940.6	67.1	-	-
Գեղարքունիք	2359.4	165.1	7.0	1936.8	82.1	257.5	10.9	-	-
Լոռի	6007.4	1678.1	27.9	-	-	4329.3	72.1	-	-
Կոտայք	2517.7	1700.4	67.5	817.3	32.5	-	-	-	-
Շիրակ	2000.2	871.8	43.6	1128.4	56.4	-	-	-	-
Սյունիք	900.8	667.5	74.1	233.3	25.9	-	-	-	-
Վայոց ձոր	253.1	-	-	253.1	100.0	-	-	-	-
Տավուշ	2715.3	-	-	2715.3	100.0	-	-	-	-
Ընդամենը	315549.0	29875.4	9.5	53880.5	17.1	7527.4	2.4	224265.7	71.0

Առևտրի այլ օբյեկտների¹ միջոցով իրականացվող առևտրի շրջանառության ծավալը ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2005թ. հունվար-դեկտեմբերին

	Օբյեկտների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Առևտրի շրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Առևտրի շրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	742	3865	72448.6	100.0
այդ թվում՝				
մինչև 5 մարդ (գերփոքր)	643	2101	7758.9	10.7
6-15 մարդ (փոքր)	77	683	8699.2	12.0
16-30 մարդ (միջին)	11	200	3791.6	5.2
31 և ավելի մարդ (խոշոր)	11	881	52198.9	72.1

Առևտրի այլ օբյեկտների միջոցով իրականացվող առևտրի շրջանառության ծավալի կառուցվածքը ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2005թ. հունվար-դեկտեմբերին

(%)



Առևտրի այլ օբյեկտների միջոցով իրականացվող առևտրի շրջանառության ծավալը ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 73 մարզերով, 2005թ. հունվար-դեկտեմբերին

Մարզեր	Առևտրի շրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	60223.4	6139.3	10.2	5318.8	8.8	1414.0	2.4	47351.3	78.6
Արագածոտն	341.8	175.6	51.4	166.2	48.6	-	-	-	-
Արարատ	97.8	97.8	100.0	-	-	-	-	-	-
Արմավիր	879.2	57.9	6.6	9.1	1.0	-	-	812.2	92.4
Գեղարքունիք	551.3	102.6	18.6	448.7	81.4	-	-	-	-
Լոռի	700.2	131.6	18.8	203.1	29.0	365.5	52.2	-	-
Կոտայք	6724.9	158.6	2.4	937.2	13.9	1593.7	23.7	4035.4	60.0
Շիրակ	858.1	424.7	49.5	23.2	2.7	410.2	47.8	-	-
Սյունիք	1310.4	236.5	18.1	1065.7	81.3	8.2	0.6	-	-
Վայոց ձոր	239.9	37.0	15.4	202.9	84.6	-	-	-	-
Տավուշ	521.6	197.3	37.8	324.3	62.2	-	-	-	-
Ընդամենը 73	72448.6	7758.9	10.7	8699.2	12.0	3791.6	5.2	52198.9	72.1

¹ Սույն ցուցանիշը վերաբերվում է շարժիչային և կենցաղային վառելիքի մանրածախ վաճառքի, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և առևտրի այլ օբյեկտներին :

**Մանրածախ շուկայի համեմատական ակտիվությունը ըստ մարզերի,
2005թ. հունվար-դեկտեմբերին**

Մարզեր	Բնակչության միջին տարեկան թվաքանակը, հազ. մարդ	Առևտրի շրջանառությունը, մլն. դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը, դրամ	Մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը հանրապետության միջինի նկատմամբ, %
ք.Երևան	1103.4	732279.1	663657.0	241.0
Արագածոտն	139.3	12629.0	90660.4	32.9
Արարատ	273.8	14874.6	54326.5	19.7
Արմավիր	278.7	17981.9	64520.6	23.4
Գեղարքունիք	239.3	10896.7	45535.7	16.5
Լոռի	283.6	26352.0	92919.6	33.7
Կոտայք	274.6	28225.9	102789.1	37.3
Շիրակ	281.5	16695.1	59307.6	21.5
Սյունիք	153.0	9424.1	61595.4	22.4
Վայոց ձոր	55.9	5295.0	94722.7	34.4
Տավուշ	134.5	11545.3	85838.7	31.2
Ընդամենը ՀՀ	3217.6	886198.7	275422.3	x

2005թ. հունվար-դեկտեմբերին պահպանվել է 2004թ. նույն ժամանակաշրջանում արձանագրված ք.Երևանի մանրածախ շուկայի գերակայության միտումը ՀՀ մյուս մարզերի նկատմամբ: Այսպես, ք.Երևանի մանրածախ շուկայի ծավալը 2005թ. հունվար-դեկտեմբերին 2.4 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի մանրածախ շուկայի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ տատանվել է 16.5 - 37.3 % միջակայքում:

**2005թ. հունվար-դեկտեմբերին ապրանքային պաշարների փոփոխությունը
մանրածախ առևտրում և դրանց ապահովվածությունն օրերով**

Ամիսներ	Ապրանքային պաշարներ, մլն. դրամ	Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով
Փետրվարի 1-ի դրությամբ	55013.9	76
Մարտի 1-ի դրությամբ	55339.8	76
Ապրիլի 1-ի դրությամբ	52588.8	70
I եռամսյակի միջինը	54570.6	75
Մայիսի 1-ի դրությամբ	54857.2	66
Հունիսի 1-ի դրությամբ	58582.0	67
Հուլիսի 1-ի դրությամբ	58383.9	68
II եռամսյակի միջինը	56308.9	67
Օգոստոսի 1-ի դրությամբ	50138.8	56
Դեկտեմբերի 1-ի դրությամբ	53794.8	62
Հոկտեմբերի 1-ի դրությամբ	59571.8	62
III եռամսյակի միջինը	54353.8	57
Նոյեմբերի 1-ի դրությամբ	59683.6	56
Դեկտեմբերի 1-ի դրությամբ	66618.8	64
2006թ. հունվարի 1-ի դրությամբ	62132.7	49
IV եռամսյակի միջինը	61515.2	59

2006թ. հունվարի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները հանրապետության մանրածախ առևտրի գործող օբյեկտներում կազմել են 62132.7 մլն. դրամ, իսկ ապրանքային պաշարների ապահովվածությունը՝ 49 օր:

Մանրածախ առևտրի գործող օբյեկտների ապրանքային պաշարները 2006թ. հունվարի 1-ի դրությամբ և դրանց ապահովվածությունն (օրերով)

	Ընդամենը ՀՀ	ըստ մարզերի										
		ք.երեվան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Ապրանքային պաշարները, մլն. դրամ	62132.7	56095.1	104.7	584.1	198.1	308.4	687.4	2331.6	593.2	443.5	334.2	452.4
Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով	49	51	5	31	32	49	42	50	28	33	66	50

Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով հանրապետության միջինից բարձր է Վայոց ձորի (66 օր), Տավուշի և Կոտայքի մարզերում (50 օր) և ք.Երևանում (51 օր): Սյունի մարզերում ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով ցածր է հանրապետության միջինից:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2005թ. հունվար-դեկտեմբերին դրանցում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր մանրածախ առևտրի շրջանառության ծավալի 2.9%-ը կամ 25641.8 մլն. դրամը¹:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն: